Վարագ Ներսիսեան, *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2008, 222 էջ:

Առեղծուածներով եւ բազում մեծ ու փոքր խնդիրներով է լի հայ միջնադարեան գրականութիւնը: Ուստի այն լուսաբանող իւրաքանչիւր հետազօտութիւն՝ տեսական, բնագրագիտական, թէ բանասիրական, ներկայացնում է առանձնայատուկ հետաքրքրութիւն: Իսկ եթէ ուսումնասիրութիւնը կատարուած է սկզբնաղբիւրների քաջիմացութեամբ եւ գրականագիտական հմտութեամբ, ապա ի յայտ են գալիս նաեւ որոշակի խիզախում, մեծ ջանք եւ նոր խօսք, ինչը վկայում է կայացած արժէքաւոր աշխատանքի մասին: Այդպիսին է Վարագ Ներսիսեանի *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը (X-XVIIդդ.)* ուսումնասիրութիւնը:

Տաղերգութեան խնդիրներին Վարագ Ներսիսեանը նուիրել է տասնամեակներ, աստիճանաբար յաղթահարել թեմայի բարդութիւնը, խորացել նրա այլազան ծալքերի մէջ եւ ի վերջոյ հասել ցանկալի հանգրուանի, որ է սոյն ուսումնասիրութիւնը:

Ի՞նչ է տաղը. հայ միջնադարեան բանաստեղծութեան առանձին տեսա՞կ, տարբեր տեսակների մի ամբողջութի՞ւն, թէ՞ նոյնական է ընդհանրապէս չափածոյ խօսք հասկացութեանը: Սոյն հիմնահարցին այս կամ այն չափով անդրադարձել է հայ գրականագիտութիւնը՝ հիմնականում առանձին տաղերգուների գեղարուեստական ժառանգութիւնը քննելիս:

Ինչպէ՞ս են տաղ հասկացութիւնն ըմբռնել նոր շրջանի ուսումնասիրողները եւ ի՞նչ իմաստներով է այն գործածուել հին աղբիւրներում: Այս խնդիրն է արծարծում ուսումնասիրութեան առաջին գլխում: Բերելով մի շարք գրականագէտների կողմից արտայայտուած կարծիքներ ու դատողութիւններ, ատենախօսութեան հեղինակը արձանագրել է, որ բանասիրութեան մէջ չի եղել տաղի ընդհանրական ըմբռնում: Պատճառն այն է, որ «*գրականագիտական միտքը գէթ մէկ անգամ դեռ հիմնաւոր կերպով ու հետեւողականօրէն ձեռնամուխ չի եղել հասկացութեան հետ առնչուող գրաւոր վկայութիւնների, անցեալում արուած տեսական բացատրութիւնների եւ նրա գեղարուեստական կոնկրէտ դրսեւորումների, իբրեւ մէկ միասնական երեւոյթի, համադրական, մանրագնին ու քննական ուսումնասիրութեանը*» (էջ 10):

Լրացնելով բացը, Ներսիսեանը կատարում է երեւոյթի իսկապէս մանրագնին եւ համադրական քննութիւն: Նա անդրադառնում է տաղ հասկացութեան հնագոյն գործածութիւններին ու բացատրութիւններին՝ սկսած առաջին բերականական ու տեսական թարգմանական գործերից մինչեւ միջնադարեան որոշ հայ մատենագիրների կատարած բնութագրումները, ապաւինելով նաեւ բուն տաղերգութեան տիպաբանութեանը: Ըստ այդմ, բերուած բազում փաստերի «ճնշմամբ ու թելադրանքով» հեղինակը գալիս է այն եզրակացութեան, թէ «*տաղը իր բովանդակութեամբ նոյնական է «չափածոյ կամ ռիթմիկ կազմակերպուածութեամբ օժտուած ստեղծագործութիւն» ըմբռնմանը եւ իբրեւ գրականագիտական հասկացութիւն չի մտնում ժանր կատեգորիայի մէջ*» (էջ 23):

Միանգամայն համոզիչ եւ ընդունելի է, որ տաղը առանձին գրական ժանր չէ եւ չունի ժանրային որոշակի իմաստ ու բովանդակութիւն: Սակայն այստեղ նշենք մի կարեւոր հանգամանք:

Դեռեւս աշխատութեան առաջաբանում Ներսիսեանը նկատել է, որ տաղ երեւոյթը *«գլխաւորապէս կապւում է Գրիգոր Նարեկացու գործունէութեան հետ»* (էջ 4): Այսինքն՝ սկիզբ է առնում Ժ. դարում եւ ամփոփւում ԺԷ. դարով: Իսկ վերջաբանում («Աւարտ») հեղինակն ասում է աւելին, թէ՝ տաղի հնագոյն նմուշները ստեղծուել են *«Գանձարան» ժողովածուի կազմաւորման պահանջով, որպէս տուեալ ժողովածուի առանձին մասերը ներկայացնող կանոնների բաղկացուցիչ միաւորներ»* (էջ 197): Այս միտքը պէտք է յստակ արտայայտուէր ատենախօսութեան առաջաբանում կամ առաջին գլխում, որպէսզի ի սկզբանէ չառաջանար այն տպաւորութիւնը, թէ տաղը նոյնական է առհասարակ չափածոյ խօսքին եւ հայ տաղերգութիւնը ընդգրկում է միջնադարեան ողջ բանաստեղծական արտադրանքը: Վստահ ենք, որ հեղինակը այդ կարծիքին չէ, եւ նրա ուսումնասիրած նիւթն էլ այդ մասին չի վկայում, թէեւ առաջաբանում, թերեւս վրիպելով, նա գրել է. *«Ներկայ աշխատութեան մէջ ուսումնասիրութեան նիւթ է ծառայում այս ողջ ժամանակաշրջանի* (Ժ.-ԺԸ. - Հ.Բ.) *բանաստեղծական արտադրանքն իր լաւագոյն դրսեւորումներով»* (էջ 4):

Տաղերը հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ ներկայացնում են, Ներսիսեանի խօսքերով ասած, *«մէկ միասնական երեւոյթ,*- եւ,- *հայ բանաստեղծութեան արժէքաւոր, անբաժանելի մասն են»* (էջ 5):

Չլինելով առանձին ժանր, տաղերգութիւնն ունի իր ժանրային համակարգը, ինչը եւ մանրամասն դիտարկուած է աշխատութեան երկրորդ գլխում:

Ներսիսեանը, մատենագրական փաստերի բաց ագիտութեամբ, մատնանշում է միջնադարեան հեղինակների ու գրիչների կողմից տաղի տարբեր տեսակաւորումները: Ընդ որում հիմք են ընդունուել թէ՝ կառուցուածքը եւ թէ՝ ընդհանրական բովանդակութիւնը, գործառնութիւնը եւ այլ յատկանիշներ: Քննութիւնը բերել է այն համոզմունքին, որ *«Հայ միջնադարը գործնականօրէն վաւերացրել է տաղերի ժանրային տեսակաւորման բաւականաչափ ընդարձակ մի համակարգ»* (էջ 30):

Տաղի հիմնական ժանրերի համակարգում հեղինակն իրաւամբ առանձին տեսակներ չի համարել ծիսական նշանակութիւն ունեցող մեղեդին, փոխը եւ յորդորակը, որոնք *«գեղարուեստական պատկերման ու կառուցուածքային չափանիշներով չեն սահմանագատւում գրական միւս, աւելի հաստատուն ու աներկրայելի տեսակներից»* (էջ 34): Իսկ որո՞նք են այդ հիմնական տեսակները: Հեղինակը դրանց անդրադառնում է երրորդ գլխում:

Այստեղ ընդհանրական-բովանդակային հիմքի վրայ առանձնացուած են գովեստը, պարսաւը, խրատը, ողբը, աղաչանքը, գանգատը: Առաւել մեծ ուշադրութեան են արժանացել այն ժանրերը, որոնք նախորդների կողմից հաստատաբար աւելի քիչ են հետազօտուած: Ներսիսեանը բացայայտում է խնդրոյ առարկայ ժանրերի ծագումը, զարգացումը, հիմնական ժանրակազմիչ յատկանիշները, փոխառնչութիւնները, նշում կամ վերլուծում տուեալ ժանրի լաւագոյն գործերը: Յիշատակում է նաեւ ժանրային աւանդոյթների իրագումները նոր ու նորագոյն շրջանի հայ բանաստեղծութեան մէջ: Արժէ-

բառոր են յատկապէս գովեստ-տաղ եւ պարսաւ-տաղ ժանրերին նուիրուած հատուածները:

Հեղինակը ճիշտ է վարուել՝ չանրադառնալով պատմական ողբին. ոչ միայն այն պատճառով, որ այդ ժանրը հիմնաւորապէս ուսումնասիրել է արժանայիշատակ գրականագէտ Պօղոս Խաչատրեանը, այլեւ, քանի որ այն հիմնականում դուրս է տաղերգութեան ժանրային համակարգից եւ պատկանում է պատմա-վիպագրական (մասամբ՝ սրբախօսական) բանաստեղծութեանը: Տաղերգութեան ժանր կարող է համարուել Վարագ Ներսիսեանի առանձնացրած անձնական-քնարական ողբը, որի որոշ նմուշներ է միայն թուարկում հեղինակը: Մինչդեռ ճիշտ կը լինէր, եթէ աւելի շատ տեղ տրուէր դրանց եւ ամէնեին չվերլուծուէր Դաւթակ Քերթողի ողբը, որը լիովին դուրս է տաղերգութեան ժամանակային ու ժանրային սահմաններից:

Լաւ կը լինէր նաեւ, եթէ ստեղծագործութիւնների ընդհանրական յատկանիշների հիման վրայ տրուէր իւրաքանչիւր ժանրի սեղմ սահմանումը (ինչը արուած է պարսաւի եւ գանգատի պարագայում): Դա կը նպաստէր նաեւ սահմանելու առհասարակ տաղերգութիւնը՝ որպէս գրական-գեղարուեստական մի որոշակի արտադրանք, գեղարուեստական ստեղծագործութեան կառուցուածքային ձեւ:

Որոշակի կայուն եւ դիմառնական կերպարների հիմքի վրայ հեղինակն առանձնացրել է տաղերգութեան եւս մի ժանր՝ վարդի ու սոխակի այլաբանութեամբ տաղերը: Փաստալից եւ հմտօրէն է գրուած այս ընդարձակ հատուածը: Այնտեղ բացայայտուում են հայ տաղերգութեան մէջ այդ այլաբանութեան անցած ուղին, նրա տարբեր իմաստաւորումներն ու բանաստեղծական կատարումները: Պարսկերէնի ու պարսկական պոեզիայի իմացութիւնը ուսումնասիրողին հնարաւորութիւն է տուել կատարելու մի շարք կարեւոր զուգահեռներ ու բաղդատումներ: Ընդգրկուն քննութիւնը բերել է այն համոզման, որ մեր տաղերգուների *«տուեալ ժանրով յօրինած գործերը պէտք է դիտել իբրեւ միանգամայն ինքնուրոյն ստեղծագործութիւններ, իբրեւ հայ մտքի, հայ իրականութեան ծնունդ»* (էջ 91):

Վարագ Ներսիսեանը, ըստ տաղաչափական կառուցուածքի, տաղի տեսակ է համարել նաեւ հայրէնը: Յայտնի է, որ Նարեկացուց սկսած մեր մի շարք բանաստեղծներ հայրէնի չափով յօրինել են տաղեր եւ այլ չափածոյ գործեր: Սակայն մի բան է հայրէնի չափը, մէկ այլ բան՝ բուն հայրէնը (նաեւ հեղինակային հայրէնը), որն ունի այլ ծագումնաբանութիւն (ժողովրդա-գուսանական երգ) եւ գրեթէ կանոնիկ կազմուածք: Հետեւաբար հայրէնը դուրս է տաղերգութեան ժանրային համակարգից: Մեր կարծիքով, այդ համակարգից դուրս են նաեւ «բանքերը» («բանք չափաւ»), որոնք նշանաւորում են բանաստեղծական խօսքի անկախացումը մեղեդուց: Մինչդեռ տաղը (ինչպէս շարականը) հիմնականում մեղեդային, երգուող բանաստեղծութիւն է, որը «բանք»երին զուգահեռ շարունակել է իր գոյութիւնը: Օրինակ, ԺԸ. դարի բանաստեղծ Պաղտասար Դպրի (եւ ոչ միայն նրա) բոլոր տաղերն անխտիր երգուել են...

Ուսումնասիրութեան յաջորդ երեք գլուխներն արծարծում են տաղաչափական խնդիրներ:

Վարագ Ներսիսեանը երկար տարիներ խորացել է նաեւ տաղաչափագիտութեան ասպարէզում, ուստի եւ այս գլուխներում իշխում է մասնագէտի

լրջմիտ հայեացքը, առաջադրուած խնդիրների վարժ քննութիւնը: Նրան նախ եւ առաջ զբաղեցրել է այն հարցը, թէ տաղաչափական ի՞նչ ընթրոնումներ են եղել հայ միջնադարում: Հարցի լուսաբանման համար վկայակոչւում են հնագոյն եւ հին աղբիւրների տեղեկութիւնները բանաստեղծական չափի, կշռի, ոտքի եւ յանգի վերաբերեալ: Ըստ հարկի, անդրադարձ է կատարւում նաեւ յունական եւ արաբական տաղաչափութեանը:

Թէեւ հայ հին մտածողների տաղաչափական ընթրոնումների վերաբերեալ տուեալները սահմանափակ են, սակայն բուն գեղարուեստական նիւթի ուսումնասիրութիւնը հեղինակին բերել է այն ճիշտ եզրակացութեան, որ հայ միջնադարում *«գոյութիւն է ունեցել խօսքի ռիթմիկ կառուցման որոշակի ձեւաւորուած զգացողութիւն,-* եւ,- *հայ տաղասացները լիովին օժտուած են եղել այդ զգացողութեամբ եւ դա հմտօրէն կիրառել են իրենց չափածոյ գործերում»* (էջ 121):

Վերը ասուածը փաստելու համար հեղինակը քննում է այն գործօնները (չափ, տուն յանգ), որոնց միջոցով հայ տաղերգուները կազմակերպել են իրենց չափածոյ խօսքի ռիթմը: Գեղարուեստական վիթխարի նիւթի հիման վրայ ներկայացւում են տաղերգութեանը բնորոշ բանաստեղծական չափերը, դրանց լաւագոյն նմուշները, իւրայատուկ դրսեւորումները տարբեր հեղինակների տաղերում: Ընդհանրականն այն է, որ տաղերը *«հիմնականում ունեն անդամաւոր կազմութիւն, բանաստեղծական տողերի միակերպ ամդամհատութիւնը իրագործւում է խօսքի քերականական չեշտերի կայուն դասաւորութեամբ»* (էջ 252): Դա հայ տաղերգութեան եւ առհասարակ հայ բանաստեղծութեան ամենաբնորոշ տաղաչափական առանձնայատկութիւնն է:

Առանձին գլուխ է յատկացուած նաեւ յանգ եւ տուն տաղաչափական միաւորներին: Այստեղ էլ նոյն մասնագիտական հմտութեամբ քննուած են այդ միաւորների առաջացումն ու այլազան դրսեւորումները տաղերգութեան մէջ:

Հեղինակը որոշակի օրինակներով ցոյց է տալիս, որ մեր տաղերգուները բանաստեղծական տները կառուցել են որոշակի կայուն սկզբունքով. *«Տողերի ռիթմը ամբողջանում է տան մէջ, եւ իբրեւ առաւել բարդ ռիթմական միաւոր, կրկնւում յաջորդ տների ձեւով»*: Իսկ տողերի ու տների ռիթմը մեր քերթողները հարստացրել են *«յանգի գործածութեամբ, որը հաստատապէս մուտք էր գործել հայ գրաւոր բանաստեղծութեան մէջ X դարից ի վեր»* (էջ 126):

Մենք նշեցինք Վարազ Ներսիսեանի *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը (X-XVIIդդ.)* ուսումնասիրութեան մի շարք արժանիքներ, որոնք, անշուշտ, բոլորը չեն: Յընթացս կատարեցինք նաեւ որոշ դիտողութիւններ, որոնք, մեր համոզմամբ, լրջօրէն չեն ստուերում աշխատութեան անուրանալի արժէքը. աշխատութիւն, որ լուսաբանում է բազում կնճռոտ հարցեր եւ քննուող երեւոյթի մասին յիրաւի տալիս է ամբողջական եւ յստակ պատկերացում:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ
litart.yerevan@gmail.com